Շնորհակալական նամակ Հայաստան Համահայկական հիմնադրամի Գերմանիայի մարմնին

Ձեզ գրում է Պատարայի միջնակարգ դպրոցի VIII դասարանի աշակերտուհի Լիլիթ Դանիելյանը:

Անակնկալ ծրագրերով լի է ԵՕ դպրոցը: Մենք մեծ սիրով ենք մասնակցում ԵՕ դպրոցի աշխատանքին: Այդ մեծ հնարավորությունը տվել եք Դուք՝ Ձեր հայրենանվիրությամբ, համառ ու նպատակամետ աշխատանքով: Արարելու, ապրելու հունդը պահ տալով մեր մատաղ հոգիներում: ԵՕ դպրոցը մեր առաջ բացեց ոչ միայն լայն հնարավորություններ, այլև սովորեցնում է միասնականություն, համառություն, մեկը մյուսին սատար կանգնելու կարողություն: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Հայաստան Համահայկական հիմնադրամի Գերմանիայի մարմնին:

Ձեր բարեխիղճ ու ազնիվ աշխատանքի շնորհիվ այսօր Արցախի դպրոցներում է ԵՕ դպրոց ծրագիրը: Թող Արցախում սերմանած հունդերը տան իրենց պտուղները, թող Ձեր արարող ձեռքը լինի ավելի բեղուն:

Այսօր Արցախ աշխարհս զգում է արարող ու բարի մարդկանց ներկայությունը, նրանց հոգատար ձեռքը: Միասնականությունը, նպատակամետությունը կտա իր ցանկալի արդյունքը: Դուք ուժ ու հավատ ներշնչեցիք մեզ: Ձեր կատարածը միայն ու միայն արժանի է մեծարանքի:

Գործն է անմահ լավ իմացեք…

Երիցս ճիշտ էր մեծ բանաստեղծը:

Միահամուռ աշխատանքով հասնենք այն ցանկանալիին, որի ակնկալիքներով Դուք ներ եք դրել Ձեր ծրագիրը:

Շնորհակալություն…